# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 1, մասնաշենք 4 հասվեում, ստորև ներկայացնում է «ՏՎԿ-ՊԸԾՁԲ-21/01» ծածկագրով Պարզեցված ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրում 2016թ. ապրիլի 02-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության պատճառ:** Պատվիրատուի կամահայտնությունը:

**Փոփոխության նկարագրություն:** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի թիվ 1 հավելվածում՝ «Ձեռք բերվող ծառայության նկարագիր» բաժինը լրացնել հետևյալ պարբերությամբ.

1. «Կատարողը պետք է իրականացնի սույն թվականի ապրիլի 2-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության սահմանների ողջ երկայնքով ծավալված ռազմական գործողությունների վերաբերյալ համացանցում ադրբեջանական լրատվամիջոցների և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի օգտատերերի կողմից տարածվող ադրբեջանամետ, սադրիչ, խուճապ առաջացնող, իրականությանը չհամապատասխանող և ներքին, արտաքին անվտանգությանը սպառնացող տեղեկատվական նյութերի հայտնաբերում, Պատվիրատուին անհապաղ բանավոր զեկուցի դրանց բովանդակության մասին, ինչպես նաև Պատվիրատուի ուղղորդմամբ տարածի ապատեղեկատվությունը ժխտող տեղեկատվական նյութեր, ինչպես նաև ռազմական գործողություններին վերաբերող տեղեկություններ, այդ թվում՝ պաշտոնական հաղորդագրություններ և հայտարարություններ»:
2. Պայմանագրի 4.1. կետով ամրագրված ծառայությունների ձեռքբերման գինը ավելացնել 500.000 /հինգ հարյուր/ հազար ՀՀ դրամով:
3. Գնման ժամանակացույցը թողնել անփոփոխ:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.3 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Պատվիրատուիգնումների համակարգողին:

Հեռախոս՝ 010 51 59 53
Էլ փոստ՝ info@gov.am
Պատվիրատու՝ «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ